տարկ բարձեալ ի վերայ ուսոցն Ը և Ժ, և զահվէճին՝ ունելով ընդ իւրեանս զկերտիչ գործոյ զահվէիցն սեւագոյն գիմօք։

զ. Եւ ապա եկն ախթարն. նոքա ևս նոյն զգեստով և պետք յառաջ և յետոյ ի վերայ ըղտուն խանութ չինեալ և յամենայն բանից անդ արկեալ՝ հանդերձ մանկամբ և ծխանելեօք, շաքարով և մեխակովք. և ընդ սմին էր քէթէնճին և չէքէրճին և սապոնճին. և մանկունք նստեալ ծախէին զբարիս և ծխէին զղանազան խունկս։

է. Եւ ապա եկն բանակ կտաւածախից այնպիսի երանդ երանդ զգեստուք և ընդ սոսա յետս և յառաջ պետքն և իւրեանց բարակ կտաւուքն և ծիրանօքն, դիպակովք և մաթահուքն, շապկով և մարհամով։ Եւ ընդ սմա էր խառն պօղասիճին, պէզճին և եաղլըքճին և կեօմլէկճին։

ը. Եւ ապա եկն հալաճին օրտուն նոյն զգեստովն և պետիւքն իւրեանց, և խանութ ի վերայ ըղտու և ի վերայ խանութին առիւծք չինեալ ի բամբկաց գունըզգուն, և ի մէջ խանութին գէր գրամբակն և մանուկ մի ըստէպ ըստէպ. և ընդ սոցա էր խառն ղաւուխճին և թաքեաճին և եօրղանճին, ղափամաճին։

թ. Եւ ապա բանակ դերձկացն այնպէս երթային և պետք նոցին յառաջ և յետոյ և զգեստք հինք և այլաձևք բարձրացուցեալ ի վերայ ձողիցն, զոր ի վաղուց պահեալ պետք արհեստաւորացն՝ զարմանալի հնարիւք կարեալ, զորս և յօր բանակի ելանելոյ իւրեանց ընդ իւրեանս բառնան. և այլ ի վերայ ձիոցն մանկունք Գ կարէին երթալով. Եւ ընդ սոցա՝ փարաճին և պօղմաճին։

ժ. Եւ ապա բանակն հերահարթիցն որ ասի պէրպէռ. նոքա և նոյն գունակ զգեստովն և պետք ևս ընդ իւրեանս երիվարօք, և ի վերայ ըղտոյ խանութ